Արձանագրություն N 3
ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

գ. Ախուրյան 19.փետրվար.2019թ
ժամը՝11;00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Կնյազյան

անդամներ՝ Գայանե Հարությունյան, Հարություն Կիրակոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գյուլվարդ Բագրանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Ա. Կնյազյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին,
3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
(Ա. Կնյազյան)

Ընդունել ի գիտություն, որ փետրվարի 15-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացության առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի ,
2. հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,
3. հայտը ներկայացնելուն նախորդ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին իր՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	Ընտրված մասնակից ճանաչել՝	
1	,,Նատալի ֆարմ ,, ՍՊԸ	1
1	,,Թեոֆարմա,, ՍՊԸ	3.4

Ընդունվել է որոշում կողմ՝3, դեմ՝ 0:

3.Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը ներառյալ4-րդ չափաբաժնի համար: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում 1,3-րդ չափաբաժինների համար:

Ընդունվել է որոշում կողմ՝3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կնյազյան)

«ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/6 » ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում

Ընդունվել է որոշում կողմ՝3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կնյազյան

անդամներ՝ Գ. Հարությունյան

Հ. Կիրակոսյան

Քարտուղար՝ Գ. Բագրանյան